


Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Տարեկան գին կ' Պօլսոյ շմբ. 10 Կ՛ն.
Գաւառաց . 2 Լիբր
Վեցամս . կ' Պօլսոյ . 5 Կ՛ն.
Գաւառաց . 1 Լիբր
Ստար երկիրներու . 50 Ֆր.
Գրանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :



Լ Ե Մ Ք Ի Բ

Հ Ա Ն Ա Պ Ա Չ Օ Ր Ե Ա Յ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Գուրս զնոցամ լրացրայ ճանրու-
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրացրայ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ պրութիւն խմբագրի-
— Տնօրէնին պիտի ուղղուի : Գալա-
թիա Սանտրոքըլար Հաստիսի թիւ
198, Կօթո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը շփարուած նա-
մակ շնորհուհուիր :
Չտպուած նամակ, յօդուած, ևն
ես չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լոնտրայէն հեռագիր մը, զոր
արդէն հրատարակեցինք, կը ծանու-
ցանէ թէ Գաղղիա Բ. Դրան նոր վո-
լտաութիւն մը կ'առաջարկէ 340
միլիոն ֆրանքի, որ թղթադրամին
բարձման, մարտնչուն հասոյթով ե-
րաշխատութեալ առժամանակեայ վո-
լտաութեանց միջաման և դանձին
ստիպողական ծախուց պիտի յատկա-
նայ եղեր : Երբ վոլտաութեան պար-
տամուհակները նախամեծար պիտի
լինին և մաքսատանց եկամուտներով
պիտի ապահովին : Բայց որովհետեւ
այս ծրագիրը մարտնչը գրեթէ օտար
վարչութեան ներքե կը դնէ, և ել-
մուտական գործերն արտաքին աղբ-
ջութեան միջամտութեան առիթ
մը կը լինին, կ'երեւի որ Բ. Դրան
ինքնին իւր ելմուտական վերածնու-
թիւնն ի գործ դնել կուզէ և ասոր
համար պէտք եղած միջոցներ ձեռք
կառնու : Եկամտից և ծախուց հա-
մար յանձնարուածքեր կազմուեցան,
որոց պաշտօնն է առաջիններն աւել-
ցնելու և վերջինները նուազեցնելու
աշխատի :

Եկամուտներն աւելցնելու համար
ընականաբար երկրէն նոր զոհողու-
թիւններ պահանջել հարկ պիտի լի-
նի տրոց միջոցաւ, իսկ ծախուց նը-
ւազութեան համար վարչական մեքե-
նայն պիտի պարզուի՝ աւելորդ մա-
սերը բաժնալով, և ոչ միայն թոշակ-
ներն՝ այլ և թոշակաւոր պաշտօնա-
տարները նուազեցնելով : Այս մը բազ-
մաթիւ պաշտօնատարներ լցուած
են տէրութեան զիւաններն, որք կա-
նոնաւոր ամսական չեն առնուր, և
կանոնաւոր կերպիւ չեն աշխատիր :
Տարակոյս չկայ որ երբ ընտրանք
պաշտօնատարներ կարգուին, աշխա-
տութիւնն ու արժանիքը ճանչուի ու
վարձատրուի, թէ՛ գործերն աւելի
կանոնաւոր կ'երթան և թէ ծախուց
մասին մեծ խնայութիւնը կրնան կա-
տարուիլ : Ուրեմն յիշեալ յանձնա-
խումբերը գործողութեան ընդարձակ
ասպարէզ ունին իրենց առջև :

Այս անօրէնութեան հետ ՚ի միա-
սին կ'ըսուի թէ Բ. Դրանը նախան-
ձանդիր լինելով իւր ելմուտական ան-
կախութեան, կը ջանայ որ արտաքին
օգնութեան և փոխառութեան պէտք
չ'ունենայ, ուստի Գաղղիոյ սեղանա-
ւորաց հետ կը բանակցի եղեր՝ մաք-
սերն երաշխաւորութիւն տալու և
վարչութիւնն ալ իրենց թողու պայ-
մանաւ փոխառութիւն մը կնքելը : Այս
գաղափարը գովելի է, բայց կրնայ
լինիլ որ Արեւմտեան մեծ տէրու-
թեանց առաջարկը վերադառնայ,

քանզի ըստ հեռագրական լրոյն, Պ.
Վատինկոնի ծրագրին լորտ Սալիս-
պըրի ալ հաւանութիւն յայտնած է,
և երբ երկու տէրութիւնը թախան-
ձանք պնդեն, հաւանականաբար
իրենց ծրագիրն ուշադրութիւն կ'ը-
սանայ. սակայն կարելի է որ ճըն-
շում գործադրելէ խորշին և գործը
Բ. Դրան աղատ կամքին թողուն :

Պուլզարիոյ իշխանն այցելութիւն
մը կուտայ այս միջոցիս Ռուսմանիոյ
իշխանին, բայց կրտսի թէ երկու իշ-
խանաց միջև դաշնակցութեան զորոյց
ներն անհիմն են, քանզի Պուլզարիա
առանց Բ. Դրան հաւանութեան քա-
ղաքական դաշնակցութիւն կնք-
լու իրաւունք չունի, բայց հաւանա-
կան է որ առևտրական և մաքսային
պայմանագրութիւն մը կնքուի սահ-
մանակից երկու իշխանութեանց միջև :
Ասկէ զատ՝ կը կարծուի որ Ալեքսան-
դրը կայսրը բաղձացեր է որ Պաթէն-
պէրկ իշխանը նախ կարողոս իշխանին
այցելութիւն տալով, Ռուսմանիոյ և
Ռուսիոյ միջև Պեստրապոլոյ առժիւ-
և Արապ-Թապեաթի խնդրոյն պա-
ճառաւ ծագած ցրտութեանց վերջ
տալու համար միջնորդէ : Հարկաւ
Պաթէնպէրկ իշխանն այս վերջին
խնդրոյն վրայ ևս պիտի բանակցի,
որ ուղղակի Պուլզարիոյ յարաբերու-
թիւնն՝ ունի, և Տալուսայի կողմը
Ռուսմանիոյ սահմաններն որոշելու հա-
մար խորհրդակցի : Ռուսմանիա Սի-
լիսթի մօտ Արապ-Թապեաթի դեր-
քը կը պահանջէ առարկելով թէ Գա-
նուբի վրայ կամուրջ, հաստատելու
համար ամենէն յարմար կէտը հոն է,
թէ երբ Արապ-Թապեաթի Պուլզարիոյ
մնայ, թէ և ամբողջութեամբ քանդ-
ւին, Ռուսմանիոն կամուրջին վրայ
դիտող դերք մը մ'են սպասուողիք մը
կը լինին : Բայց դուշէ Պուլզարիա ալ
պատասխանէ թէ երբ այս իրքը տայ,
Սիլիսթիք իրեն համար արժէք մը չու-
նենար : Այս խնդիրը բաւական ժա-
մանակէ ՚ի վեր առկա մնացած է :

Վերջերս կըսուէր թէ Պուլզարիոյ սահ-
մանաց խառն յանձնարուածքն հոն պի-
տի երթայ խնդիրը լուծելու համար,
բայց տակաւին բան մը չ'եղաւ : Կը
յուսացուի ուրեմն որ երկու իշխանը
իրենց տեսակցութեան մէջ այս դժ-
վարութիւնը կը վերջացնեն : Պուլ-
զարիոյ իշխանը Պուլզարէն վերադառ-
նալէ ետեւ Պերկրատ պիտի երթայ
Սիլիսթիոյ իշխանին այցելութեան :
Հարկաւ Սիլիսթի և Ռուսմանիոյ իշ-
խաններն ալ փոխադարձ այցելութիւն
ներ պիտի տան, ուր դուշէ Գարա-
տաղի իշխանն ևս դանուի, թէ և այս
վերջինը հիմա Աւստրիական գորայ
Պոսնիան գրաւելէն յետոյ՝ բոլորովին
բաժնուած է՝ Գանուբեան երեք
սահմանակից իշխանութիւններէն :
Այսպէս Գանուբի կողմը նոր իշխա-

նութիւններու համաստեղութիւն մը
կը հաստատուի, որք ՚ի վերջոյ Գա-
նուբեան դաշնակցութեան մը տարր
կրնան կազմել : Բայց ո՞վ պիտի նա-
խագահէ ասոնց, Աւստրիա՞ թէ Ռու-
սիա : Գերմանիա զԱւստրիա դէպի
Արևելք կը միցէ այս ապագայ դաշ-
նակցութեան նախագահութիւնը
խոստանալով իրեն : Արդէն Գարա-
տաղի իշխանը վիշննաւ ուղևորելով
և Աւստրիոյ հետ սերտ բարեկա-
մութեան նշաններ ցուցնելով, ճանչ-
ցաւ անոր բարոյական գերելիանու-
թիւնն, Աւստրիա Սերվիոյ հետ կը
բանակցի՝ երկաթուղեաց և մաքս-
րու դաշնակցութեան կապելով ա-
նոր հետ ալ սերտ միութիւն մը հաս-
տատելու համար :

Ռուսիա հազիստատես է այս շարժ-
մանց, բայց չկրնար թողուլ որ իւր
օգնութեամբ հաստատուած իշխա-
նութիւններն Աւստրո-Գերմանական
աղբեցութեան ներքե կնան : Եւ
այս պատճառաւ Գերմանիոյ և Ռու-
սիոյ միջև նախկին բարեկամութեան
ցրտանալուն նշաններ կը տեսնուին,
և կրտսի թէ կորչալով իշխանը Պա-
տէնէն Բեդրապուրկ դառնալու ժա-
մանակ Պէրկրէն պիտի անցնի՝ ա-
ռանց Պիսմարը իշխանին հետ տե-
սակցելու, որ նոյն միջոցին վարձին
պիտի դաժնուի եղեր :

Հելլենական խնդրոյն վրայ կիրա-
կի օրը պատուիրակաց ըրած նոտին
նկատմամբ Ֆար Տիւ Պոսթօրի տուած
տեղեկութեանց նայելով, այս նիստն
ալ վերջացաւ առանց խնդիրը լուծ-
ւելու, և յայտարարութեանց փոխա-
նակութեամբ անցաւ : Հելլենական
պատուիրակները պիտի սպասեն որ Ա-
թէնքէն նոր հրահանգ ընդունին Օս-
մանեան պատուիրակներուն տուած
այն յայտարարութեան վրայ թէ ԺԳ.
ատենադրութիւնը կրնայ ազատ վիճա-
բանութեան ենթարկել : Ինչպէս կը
տեսնուի, խնդիրը միշտ հաշակա-
ւոր ԺԳ. ատենադրութեան վրայ է,
և շարժման պէտք եղան որոշելու
համար թէ արդեօք այն ատենա-
դրութիւնն ի՞նչպէս վիճարանու-
թեան պիտի դուրսի, պարտաւորիչ
և փոփոխելի՞ է թէ ո՞չ : Տակաւին
այս կէտն ամբողջ չպարզուեցաւ, և
երբ պարզուի, այն ատեն կը մնայ
բուն ԺԳ. ատենադրութեան վրայ վի-
ճարանիլ : Այսպիսի յայտարարու-
թիւններէ ետեւ՝ գեռ հիմնական
խնդիրը մէկ կողմ մնացած է, և ո-
րոշուած չէ թէ արդեօք սահմանաց
ուղղութիւնն ո՞ր գծին վրայէն պիտի
լինի : Եթէ ատենադրութիւնը պար-
զապէս ընդունուի, վերջնական գի-
ծը սահմանել հարկ է, և դուշէ այս
գործը խառն յանձնարուածք մը մը-
նայ : Վեցերորդ նիստ մը պիտի լի-
նի բայց հաւանական է որ վերջին

չլինի : Պատուիրակները լիազօր կան-
ուանին և չեն, քանզի իւրաքան-
չիւր նիստէ ետեւ իրենց տէրութեան
հրահանգ կը խնդրեն, մինչդեռ լի-
ազօր մը պէտք է ամենայն ինչ ինք-
նին անօրինելու արտօնութիւն ու-
նենայ, այն ժամանակ խնդիրը քա-
նի մը նախ մէջ կրնար վերջանալ,
մինչդեռ հիմայ շարունակ կ'երկա-
լուծուի :

Լորտ Սալիսպըրի և Պ. Վատինկ-
թոնի տեսակցութեան վրայ կը կար-
ծուէր թէ Անգլիա Հելլենական
խնդրոյն մէջ Գաղղիոյ նպատաւօր
դերք մը պիտի լռուէ, բայց Անգ-
լիա Սալիսպըրի մէջ միլիտանտոր խլամ-
հպատակներ ունի, որք վէհ, Սուլ-
թանին բարոյական և կրօնական ազ-
դեցութեան ներքե են : Ուստի ու-
րիշ տէրութեանց չափ ճնշումի գործ
դնելէ կ'զգուենայ, մանաւանդ որ
այս միջոցիս Աֆղանստանի գործը
բոլորով զբաղած է, բայց Գաղղիոյ հետ
համաժողով կ'երեւի էանտայի խնդրոյն
վրայ Տէպա լրագիրը իրանեան խոս-
լացուց վերեւտիւն կընձանցնէ, և կը
կարծէ, որ ինչպէս Աւստրիա վէնե-
տիկը տալով կըցաւ ազատիլ խալիֆոյ
կողմէն հողերէ և զբաղմունքէ, նայն-
պէս ալ Թուրքիա՝ սահմանաց լըն-
դիրը լուծելով Յունաստան իրեն բա-
րեկամ կ'ընէ, և հիւսիսէն Սլաւներ-
ըն՝ հարաւէն ալ Հելլենները թըշ-
նամի ունենալով երկու կրակի մէջ չը
մնար :

ՀՆՈՒՍԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 7 հոկտ.

Կրէկական Ռուս լրագիրը ծանուցնի-
թէ Պուլզարիոյ սահմանագլխին մօտը Չա-
րկիլ ըստուած տեղը գտնուող Օսման-
եան գորայ հրամառարը Քիւթիսիոյ վի-
զաւասին Մելիշիլի, Քորտիլիմա և Սա-
սա անուն գրեգոր գրաւեր է : Սակայն
եղած քննութեան կը հասկցուի թէ
Պուլզարիոյ սահմանագլխաց միջազգային
յանձնարուածքն յիշեալ գրեգորներն Թուր-
քիոյ վերաբերելի որոշած էր, և թէ Օսմ-
ան հրամառարն առ առաւելն սա թերու-
թիւնն ունեցած էր որ յաստիցայ Պուլ-
զարական կառավարութեան տեղեկու-
թիւն չէր տուած կամ Պուլզարական իշ-
խանութեանց կողմանէ յանձնուելուն
չէր սպասած :

Այս տուածուտան Անգլիերէն լրա-
գիրը կը ծանուցանեն թէ երկէ գու-
մարեալ նոտարարաց խորհրդին մէջ լոր-
հըրդարանի գումարման խնդիրը վիճա-
բանութեան նիւթ եղեր է առանց որ-
շում արուելու : Բնդ հակառակն, նոխա-
րար որոշած են որ Աֆղանստանն սա-
մանակեայ կերպիւ գերմանական գը-
րաւման ներքե անուի :

Սեպտեմբ 7 հոկտ.

Երբ Տոքթ. Ալիշ մոյնէ Յայթուհի իւր
այս առաւտուան թուոյն մէջ կըսէ, և կը
կարծ եմք գիտնալ թէ Գերմանիա Պիլզարը

Յայտնի է թէ Ազգ. Հիւանդանոցը որ անխոր զվտ. թեան արժանի անձանց սրտասպարանն է, իր մէջ, ինչպէս որ հիւանդանոց, յիմարաց և այլ զանազան կարգի անձանց համար յարկեր ունի, այս յարկաց ընդարձակութիւնը, երբ իրենց չափէն աւելի անձինք պարունակելու ծառայեն անշուշտ հոն, հիւանդանոցութիւնը և այլ զանազան անտեղութիւնք տեղի կունենան. հոգաբարձութիւնը որ այս խղճի հակառակ դէպքը նախատեսելով առ այժմ ուրիշ դարման չգտաւ, եթէ ոչ բեռնաւորեալ յարկաց համար դադարեցնել ընդունելութիւնը, և որովհետեւ Որդանոցըն ալ այս կարգէն ըլլալով 490 աշակերտներով բեռնաւորեալ է այսօր, կուգայ ինչքեղ պատուարժան թաղ խորհուրդներէն և Մեծ. ազգայիններէն, որ այն տղաքները, որք հայր կամ մայր և կամ մեղծաւոր ազգականներ ունին, անոնց համար հոգաբարձութիւնս յիշխանան:

Իրաւ է թէ երբ այս ազգային հաստատութիւնն ընդարձակուի այս արդելքն ալ կանհետանայ. սակայն թէ ասի ընելու և թէ յիշեալ յիշանալ հաստատութեան խորհուրդ վիճակը ապագայ վտանգէ ազատած ըլլալու համար ընդհանուր նորոգութեան մը հարկը անհրաժեշտ կըլլայ, որոյ համար թէպէտ Հոգաբարձութիւնս այս տարի բաւական դումար սպասելով մի քանի նորոգութիւններ ընել տուաւ, սակայն դարձեալ յիշեալ հաստատութեան վիճակն այն սատիճանի խորքըն է, որ հոգիւ կրնայ 2-3 տարի ևս տոկալ. բայց դժբաղդարար Հոգաբարձութիւնս ասի նորոգելով հանդերձ՝ երբ կը տեսնէ թէ մէկ կողմէն նուիրաւորութիւնը դադարած, հաստից քանակութիւնը նուազած, և միւս կողմանէ ալ արւթիւնը անիրաւեան է, ակամայ պարտաւորեալ է նոյն կարեւորագոյն համարում նորոգութիւնը առ այժմ յետաձգել, և հետեւապէս իբր միակ դարման յայտարարել թէ բացի անհայր կամ անմայր և անոք աղաքներէ, ուրիշ որ և է կարգի տղայք չլիտի ընդունելին առ այժմ յՈրդանոց:

Ի դիմաց Հոգաբարձութիւնս 1879 սեպտ. 24 թեան Հիւանդանոցի Կրաս. Հիւ. նոյն Ատենապետ Ստենապետ Տ. Կեօն-Ղեբընեան Միտայէլ Յուրեան

ԿԻՒԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Կ. Պոլիս 21 սեպտ. 1879
... Խմբագիր .
Ինչպէս թեամբ կը ծանուցանեմք թէ հետեւեալ ազգային Եփեսոսիւնը բարեհաճեցան նպատակ ընկերութեանս իրենց նախնեցիկը և քաջալերեցին զայն իւր նպատակի գործադրութեան մէջ .
Ընկերութեանս Ընդհ. Ժողովոյ Ատենապետ մեծ. Պ. Մինաս Չեբրազ բարեհաճեցաւ ընկերութեանս Չեբրութեան վարժարանին նուիրել 25 օրինակ իւր հեղինակած «Գրական Փորձեր» էն:

Ուսուցիչ ազգայիններէն Մեծ. Պ. Մկրտիչ Մանասարեանց նուիրեց Հաճընի և Չեբրութեան ԿԻՒԻԿԵԱՆ վարժարանաց համար 2 օրինակ «Փորձ» հանդիսի մշտնջենական բաժանորդագրութիւնը:
Նոյնպէս Ուսուցիչ ազգայիններէն Մեծ. Պ. Նիկողայոս Տէր Դեւանդեանց նուիրեց ընկերութեանս 100 օրինակ իւր «Մայրենի լեզու» Արեւելորան» և 10 օրինակ «Յայտարարութիւն մայրենի լեզուի» հեղինակութիւններէն:

Մեծ. Ստեփան Եփեսոսի ֆախաղեան բարեհաճեցաւ յանձնել ընկերութեանս 250 հատորի չափ հազուագիւտ գրքեր, որք մնացորդ մնալ կը կազմեն այն մեծ քանակութեան զոր ժամանակաւ հանդուցեալ հոգեւոր Շահնապար վարդապետ Հաստատի դպրոցաց կապած էր և որք յիշեալ Եփեսոսի քով յարգ պահուած էին:

Նոյնպէս ընկերութեանս ընդհ. Ժողովոյ Ատենապետ Մեծ. Պ. Հրանտ Ասատուր ի նպատակ ընկերութեանս հրատարակեց իւր Սահմանադրութեան 19րդ տարեգարծի աւթիւն խօսած ճառը, անտի դոյսացած հասոյթը ընկերութեանս նուիրելով:

Գործադիր Ժողովս պարտ անձին կը համարի Չեբր պատուական թերթին միջոցաւ իւր խորին շնորհակալելն յայտնել հրատարակաւ յիշեալ ազգային Տեբրազ որք քաջալեր կանգնեցան ընկերութեանս իրենց օժանդակութեամբ և մեծապէս նըպաստեցին ԿԻՒԻԿԵԱՆ ազգայնոց մտաւորական զարգացման:

Մնամբ մեծաւ յարգանքով Ատենապետ Ստենապետ Տ. Արեւելեան Գ. Ապրիլեան

Բուժելի երկաթուղեաց 58րդ վիճակահանութիւնն օգտատու Վին (ըստ Ն. Տ.) կատարուելով հետեւեալ թիւերը պարգև շահեցան:

Պարգև շահող Ինչ	Թիւ	Ֆրանք	Թիւ	Ֆրանք
18230	300000	50446	1000	
1283134	25000	66945		
510433	10000	220140		
1432445		227876		
18226	2000	227877		
92924		235323		
212366		235922		
235921		283306		
1775587		489853		
1798940		553622		
22614	1250	632695		
50449		639541		
413670		673460		
171493		682508		
283307		702618		
283308		745605		
573775		794250		
682510		823757		
823759		823760		
929038		885904		
1432442		951772		
1768678		1046873		

955	1000	1360700	»
18228	»	1495362	»
47837	»	1617067	»

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Ճ Ա Շ Ա Կ

ՀԱՅ ՄՈՏԵՆԵՐՈՒԹԻՒՆ
ԾՈՂԱԿՈՒՄՈՂ ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՈՒԷ
Հանդերձ գրական, պատմական, կենսագրական և այլ ծանօթութեամբ:

Աշխարհից Ս. Պիտեմեան
Ազգային ամենէն նշանաւոր հեղինակաց գործերէն քաղելով պարատուած է այն հաւաքածոյն, որ բաց ի զանազան կարևոր տեղեկութիւններէ՝ կը պարունակէ նաև Հայ բանաստեղծներու կենսագրութիւնք, որոցմէ ոմանք անծանօթ են:

Այսպիսի հաւաքածոյ մը կըրնան կարգաւ ամեն կարգի անձինք, նա մանաւանդ վարժարանաց բարձրագոյն կարգի աշակերտք, որոց շատ անգամ անօգուտ գրեանք կը արուին սերտորութեան:

Այս գիրքը մեծ դիւրութիւն պիտի ընծայէ դասատուաց, որք Հայերէն լեզուի դաստիարակութիւն կը նեն դպրոցներու մէջ, միանգամայն Հայ երէնաստեղծներու և ընտանեաց համար ընթերցանութեան մէջ հատիկ գիրք մը է:

Կեդրոնատեղին է Մարդարեան գրատուն. կը ծախուի նաև ամեն գրավաճառաց և ջրավաճառ Պօլոս աղայի խանութը, և Բերա Պ. Վուայսի գրատունը. գինն է 40 դուրուշ արծաթ: Ծառ առնային զեղչ կըլլայ:

Ի Լ Ա Ն

Նեղամիլե Նանը աղիկ իտալեան տէկիրմէնիերի հարում ընտան ասոցան պէշ ակնէի բուժիտի թըըրմիի էվիլիտեան ի թիպարէն նիհայեթիւնէ գատար եվիլիտե օն ալթը պին երիզ ալթմըշ գըրէսի դաւալըըմագ վէ էս մանը սիմ մեծիտիէ երկիրսի զրուշ հիսապիլե նոգ տէն վէ մեշլիտէն էվիլեմէ վերիւր պատահու քեբէկին վերիւրէ քարթը վէ շերայիթը սայիւրէսիլէ ֆիրուլթ իտիլեմէք օլան պէշ երիզ պին գըրէ քեբէկին թըըրմիի էվիլէ բուժիտի ետիլիտէ բազար իրթէսի կիւնիւ միւղըլտեիլիտէ ին բասը մուղարբէր պուրնամաղա, իշթիրարսնա թալիպ օլանարբն ետիլի մեղըրիւրտէ Տարի Ծուրայի ասքէրիէ կէլմէլէրէ:
24 իլուլ 1879 Պապը Սերասքէրի

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեծապիւրի էմէպիլիտէ վէֆաթ իտէն թեպապի տէվիլէթի Ալիլէնին վերէսէսինէ այլտ օլուպ, միւտտէթը մետիտէսինէ պէրու թիթապէթ անտաղընտա մահֆուդ պուլունան մէպալիլ էսհապը թարաֆընտան տըմանյուպ հալի իւզրէ գալընը օլմանընա վէ պուլըպ միլանընտա մէմալիլը էմէպիլիտէն մէմալիլը Ծահանէտէ պուլունան պաղը թեպապը սոլթմանաթը Սէնիլէ հեօապընա կէօնտէրիլիլ մէպալիլ տալի օլուպ, Բիթապէթ պուլը իլան նիհայէ մեղըրիւր վէգնէտէ հըֆիլ իթմէք մէտալիլէթիլի տերիւհտէ իտէմէք մէթիլիլէ պինտէն, իշպու թարիլտէն իթիպարէն ալթը մահա գատար մէպալիլը մէղըրիւրէնն աղապատար օլանըպ թարաֆընտան սուրէթը քեթիլիլտէ տէլայիլ վէ պիլունան իւրպէտի իլէ ալղ օլունամարըը սուրէթտէ իանէթէն մէհաթիլիլի գօթի սիօնընա իթա օլունամաղը իլան օլունալ:

- Հիրա
12 Տէրաստեթիտէ տողմուշ օլտաղը հալաթ օլունան նամ շէհրիտէն կէշէր իւրէն պօլուլմուշ օլուն թաթիլ Արբահամ իսթապիլըն մեթուր քեթիլ էսմանը օլարապ 26/14 թըըրմիի սանի 1870 թարիլի իլէ Բէթըրսպուրիտան կէօնտէրիլիլ տիլ:
- Գար: Բալլ:
15 Թաղաթրօն ճիլարընտա վէֆաթ իթմիլ օլան էօկի Բանտեթիլ նամ քիլմէնէննիլ մեթուր քեթիլ էսհապը օլուպ 26 շուպաթ 1873 թարիլի իլէ Բէթըրսպուրի սեֆաթէթի թարաֆընտան կէօնտէրիլիլ տիլ:
- 80 13 Գէդա Սիլթէտօֆ Ս
37 6 Միւնիլը Ահմէտ Գատը օլուն նամ մէհաթիլիլ տալմանընա մահապէն 3/17 մարտ 1873 թարիլի իլէ Թիֆլիտէն կէօնտէրիլիլ տիլ:
- 90 113 Թիֆլիտէ վէֆաթ իտէն Բասնըք Պաթմիլ թաթրաֆընտան պըըրըլմըշ օլուպ 18/30 թըըրմիի էվիլէ 1873 թարիլի իլէ Բէթըրսպուրի սեֆաթէթ սէնիլէսի մարթէթիլ իլէ կէօնտէրիլիլ տիլ:
- 33 8 8 Թըըրմիի սանի 1872 թարիլիտէ Միլեպօսիլիտէ իլիտէն Եթիլիլէթի թարաֆընտան պըրապըրմըշ օլուպ 30 թէմուշ 1874 թարիլի իլէ Բէթըրսպուրիտան կէօնտէրիլիլ տիլ:
- 31 19 Մուշ սանտաղընտա տողմուշ օլունալը հալաթ 1872 թարիլիտէն Էթիլմանտէ վէֆաթ իթմիլ օլան Մարգաթ Արսէն թարաֆընտան պըրապըրմըշ օլուպ 30 թէմուշ 1874 թարիլի իլէ Բէթըրսպուրիտան կէօնտէրիլիլ տիլ:
- 25 4 Վանտա միլթէվիլիլտա վէ 1873 թարիլիտէն Գամանտապտա Նօտօ Գաթիլիլը նահիլէսիտէ վէֆաթ իթմիլ օլան հաթի Յալաթ Տէր Աւետիս թարաֆընտան պըրապըրմըշ օլուպ պալտանքի մէպալիլ իլէ կէօնտէրիլիլ տիլ:
- 30 1 1 Բեանտէնի էվիլէ 1872 թարիլիտէն Նէվիլ 22րդ դատընտէ վէֆաթ իթմիլ օլան մարանիլոյ Նիլ օլու Սէրվէթընըն էշտար օլուպ 17 թըըրմիի սանի 1874 թարիլի իլէ կէօնտէրիլիլ տիլ:
- 70 3 Թըըրմիի սանի 1875 թարիլի իլէ Հաթըրա Սատըրհեօապընա Բէթըրսպուրիտան կէօնտէրիլիլ տիլ:
- 40 89 10 Նիսան 1875 թարիլի իլէ վարդան հիսապընա Բէթըրսպուրի սեֆաթէթ սէնիլէսիտէն կէօնտէրիլիլ տիլ:
- 60 10 19 մարտ 1876 թարիլի իլէ Թիֆլիտէ վէֆաթ իթմիլ օլան Անդօսան Միլըպիլ վէ Արթ օլուն Ագամ նամ քիլմէնէլէրիլ մէթապընտան հասըլ օլան
- 26 3 Թէպապը տէվիլէթի Ալիլէտէն օլուպ Պայաղիտաթ տողմուշ օլունալը հալաթ 20 մայիս 1875 թարիլիտէն Բուստապ Պէպէսէֆիլիլի նամ մահալաթ վէֆաթ իթմ

